<u>Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների,</u>

<u>բողոքների 2013թ.-ի առաջին կիսամյակի ամփոփագիր</u>

2013թ-ի  առաջին կիսամյակում ստացվել է 642 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 428 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 415-ը, մերժվել՝ 11-ը, ընթացքի մեջ է 2 դիմում: /Դրամական օգնության դիմումները  մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 42 քաղաքացի, որից 2-ի խնդրանքը բավարարվել է, 31-ինը՝ մերժվել, 9 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 87 դիմումից դրական պատասխան է ստացել 84-ը, մերժվել է՝ 3-ը: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 33 քաղաքացիներից 10-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 23 դիմում  մերժվել է, /դիմումները մերժվել են  աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմած 9 քաղաքացիներից բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է 16 քաղաքացի, որից 7-ը ստացել է դրական պատասխան, 6-ը մերժվել է, 3-ը ընթացքի մեջ է:

է/ հողաշինության հարցերով դիմած 18 քաղաքացիներից, որից 16-ը ստացել են  դրական պատասխան, 2 դիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու  հարցերով ոչ մի  քաղաքացի չի  դիմել:

թ/ Այլ բնույթի 9 դիմում է հաշվառման վերցված, 6-ին տրվել է դրական պատասխան, 3-ը  ընթացքի մեջ են:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ